ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Թիվ 30 21.12.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

21.12. 2020 ԹՎԱԿԱՆԻ N11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ պարբերության պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Օրակարգը

1. Հաստատել օրակարգը՝
2. Գինեվետ համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
3. Գինեվետ համայնքի տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին:
4. Գինեվետ համայնքի ղեկավարի դրույքաչափը, վարձատրության չափը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Գինեվետ համայնքի 2021 թվականի բյուջեի հաստատման մասին:
6. Գինեվետ համայնքի 02.11.2020 թվականի ավագանու թիվ 25 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Ա.Հակոբյան
Հ.Քիշմիրյան
Վ.Հովսեփյան
Տ.Հարությունյան-բացակա
Թ.Հովհաննիսյան-բացակա

Գինեվետ համայնքի ղեկավար՝ Մ. Սանթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Թիվ **31-Ն** **21.12.2020թ.**

ՈՐՈՇՈՒՄ

ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Ծախսային մասում

- **Պակասեցնել**

4891 հոդվածից (ծախսային ծրագիր) պահուստային ֆոնդից 750.0 դրամ, ճշտված պլանը սահմանելով՝ 0 դրամ

4251(ծախսային ծրագիր) հոդվածից շենք. շինությունների ընթացիկ նորոգում 187380 դրամ, ճշտված պլանը սահմանելով՝ 112620դրամ

- **Ավելացնել**

4111(աշխատողների աշխատավարձեր) հոդվածին 243070 դրամ, ճշտված պլանը սահմանել 9.231.070 դրամ

4112 (պարգևատրում և հատուկ վճարներ) հոդվածին 499.310 դրամ, ճշտված պլանը սահմանել 499.310 դրամ

4212 (էներգետիկ ծառայություն) հոդվածին 145.0 դրամ, ճշտված պլանը սահմանել 1.145.000 դրամ

4234 (տեղեկատվական ծառայություն) հոդվածին 50.0 դրամ, ճշտված պլանը սահմանել 309.700 դրամ

Ա.Հակոբյան կողմ

Հ.Քիշմիրյան կողմ

Վ.Հովսեփյան կողմ

Տ.Հարությունյան-բացակա

Թ.Հովհաննիսյան-բացակա

Գինեվետ համայնքի ղեկավար Մ. Սանթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Թիվ **32**-Ն **21.12.2020թ.**

ՈՐՈՇՈՒՄ

ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Սահմանել Գինեվետ համայնքի տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարան նախագծին համապատասխան՝ նոր շենքեր, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բ) սույն կետի «ա ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000դրամ,

բբ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ,

բգ) 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

բդ) 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ

1.2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ

1.4 Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 դրամ.

1.5Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի ,սեղմված սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի,մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60 000 դրամ

1.6 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրերի մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլատվության համար օրացուցային տարվա համար՝ 50 000 դրամ.

1.7Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14 000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26 000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46 000 դրամ:

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14 000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26 000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46 000 դրամ:

1.8 Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում՝<<Առևտրի և ծառայությունների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

1.9 Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի,զվարճանքի շահումով խաղերի վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին ,խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150 000 դրամ:

1.10 Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12 000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16 000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 22 000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 32 000 դրամ,

Ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16 000 դրամ:

1.11 Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության ,յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375.0 դրամ.

զ) Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի՝ չափով՝ 150.0 դրամ.

1.12 Հայաստանի Հանրապետության համայնքների՝ խորհուրդանիշները զինանշան,անվանում և այլն, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության,աշխատանքների կատարման,ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ 100 000 դրամ.

a. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է 10 000 դրամ:

Կիրառել 0,5 գործակիցը.

2. Տեղական տուրքեր

2.1 Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոդհատուցման վճար սահմանել - 5000 դրամ

2.2 Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող,բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների այդ թվում՝ դրանց վերակառուցումը,վերականգնումը,ուժեղացումը,արդիականացումը,ընդլայնումն ու բարեկարգումը կառուցման ավարտը ,ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց - 5000 դրամ.

2.3 Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված

աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց -5000 դրամ.

2.4 Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց -10 000 դրամ:

2.5 Հողերը օտարելու, աճուրդներ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 1000 դրամ:

2.6 Հողերի մրցույթ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար - 1000 դրամ:

2.7 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու մեկ փաստաթղթի համար՝ տեղական տուրքը սահմանվում է 1000 դրամ:

2.8 Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ.

2.9 Աղբահանության վճարի դրույքաչափը սահմանել համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր 1 անձի համար ամսական 100 դրամ:

2.10 Համայնքներում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ.

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3 դրամ:

5) Գինեվետ համայնքի վարչական տարածքում համայնքի անասնաբուժի ծառայություններից օգտվելու համար սահմանել դրույքաչափ՝

ա/ խոշոր եղջերավոր անասունի յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան 960 դրամ

բ/ մանր եղջերավոր անասունի յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան 640 դրամ

գ/ խոզի յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան 320 դրամ

դ/ յուրաքանչյուր թռչնի համար՝ տարեկան 100 դրամ

ե/ Ձիու յուրաքանչյուր գլխի համար՝ տարեկան 700 դրամ

Ա.Հակոբյան

Հ.Քիշմիրյան

Վ.Հովսեփյան

Տ.Հարությունյան-բացակա

Թ.Հովհաննիսյան-բացակա

Գինեվետ համայնքի ղեկավար Մ. Սանթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Թիվ 33-Ն

21.12.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Գինեվետ համայնքի ղեկավարի դրույքաչափը, վարձատրության չափը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հետևյալ կերպ.

1.	Համայնքի ղեկավար		205000
	Համայնքային ծառայության պաշտոններ		
2.	Աշխատակազմի քարտուղար	1	165000
3.	Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	164000
4.	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	125000
	Տեխսպասարկման անձնակազմ		
5.	Հավաքարար	1	90000

Ա.Հակոբյան

Հ.Քիշմիրյան

Վ.Հովսեփյան

Տ.Հարությունյան-բացակա

Թ.Հովհաննիսյան-բացակա

Գինեվետ համայնքի ղեկավար Մ. Սանթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Թիվ 34-Ն

21.12.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՍՏԱՏԵԼ ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Գինեվետ համայնքի 2021 թվականի բյուջեն հետևյալ կերպ.

Ընդամենը բյուջեն – 20110.1

Եկամուտների գծով՝

Հարկեր և տուրքեր – 5397.0

Այդ թվում՝

1. Գույքահարկ շենք և շինություններից՝ - 840.0
   Ֆիզիկական անձանցից – 20.0
   Իրավբանական անձանցից – 820.0
2. Հողի հարկ – 1000.0
   Ֆիզիկական անձանցից – 985.0
   Իրավաբանական անձանցից – 15.0
3. Գույքահարկ փոխադրամիջոցներից – 2100.0
4. Տեղական տուրք – 80.0
5. Դոտացիա – 14713.1
6. Տեղական վճար 1200,0 որից
   ա.Աղբահանություն – 1200.0
7. Այլ եկամուտներ – 177.0
   ա. Հողի վարձավճար – 165.0
   բ. Գույքի վարձակալություն – 12.0

Ծախսերի գծով՝ -20110.0 այդ թվում

1. Կառավարման ապարատ – 1.1.1.51 11870.0, որից
   4111- աշխատավարձ 8988.0
   4212 – էներգետիկ ծառայություն 700.0
   4214 – կապի ծառայություն 100.0
   4216 – գույքի վարձակալություն 600.0
   4232 – համակարգչային ծառայություն 150.0
   4251 – ընթացիկ նորոգում և պահպանում 832.1
   4261 – գրասենյակային նյութեր 300.0
   4234 – տեղեկատվական ծառայություն 200.0
2. Կոմունալ ծառայություններ 4213 – 1840.0, որից
   Ջրամատակարարում /6.3.1.51/ 340.0
   Աղբահանություն /5.1.1.51/ 1200.0
   Կեղտաջրերի հեռացում /5.2.1/ 300.0
3. Փողոցների լուսավորում 4212 /6.4.1.51/ - 700.0
4. Պարտադիր վճար 4823 /1.6.1.52/ - 300.0
5. Մասնագիտական ծառայություն 4241 /1.6.1/ - 300.0
6. Պահուստային ֆոնդ 4891 /11.1.2.51/ - 3000.0
7. Հանգիստ, մշակույթ, կրոն 4269 /8.6.1.51/ 400.0
8. Այլ սոց. Պաշտ. 10.7.1.54 - 1700.0, որից
   Թաղման ծախս 4726 200.0
   Օգնություն 4729 1200.0
   Կրթական, մշակ. մշ. նպ. 200.0
   Աջակցություն շահույթ չի. Կազմ. 100.0

Ա.Հակոբյան

Հ.Քիշմիրյան

Վ.Հովսեփյան

Տ.Հարությունյան-բացակա

Թ.Հովհաննիսյան-բացակա

Գինեվետ համայնքի ղեկավար Մ. Սանթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Թիվ 35 -Ն 21.12.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 02.11.2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 25 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Գինեվետ համայնքի 02.11.2020 թվականի N9 նիստի թիվ 25 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 20.08.2020թ. ամիս, ամսաթիվը՝ փոխարինել 02.11.2020թ. ամիս ամսաթվով:

Ա.Հակոբյան
Հ.Քիշմիրյան
Վ.Հովսեփյան
Տ.Հարությունյան-բացակա
Թ.Հովհաննիսյան-բացակա

Գինեվետ համայնքի ղեկավար՝ Մ. Սանթոյան